ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ
ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ
ԿԵՆՏՐՈՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ANQA-2021/55

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

24 հուլիսի 2021 թ. N 55

«ԵՎՐՈՊԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ընդհանուր տեղեկություն հաստատության մասին

Հաստատության լրիվ անվանումը՝ «Եվրոպական համալսարան» հիմնադրամ /ԵՀ/
Գործունեության հասցեն՝ ՀՀ, ք. Երևան, Դավիթ Անհախթի 10

Նախորդ հավատարմագրման մասին **պայմանական ինստիտուցիոնալ հավատարմագրում,**
որոշումը և ժամկետը՝ **2 տարի ժամկետով՝ 12.04.2018թ.- 12.04.2020թ**

«Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի Հավատարմագրման հանձնաժողովը (այսուհետ՝ Հանձնաժողով), ղեկավարվելով ՀՀ կառավարության 2011 թվականի հունիսի 30-ի N 978–Ն որոշմամբ հաստատված «ՀՀ մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների և դրանց մասնագիտությունների պետական հավատարմագրման» կարգով, «ՀՀ մասնագիտական կրթության հավատարմագրման չափանիշները հաստատելու մասին» 2011 թվականի հունիսի 30-ի N 959–Ն որոշմամբ, «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի (այսուհետ՝ ՈԱԱԿ) հավատարմագրման հանձնաժողովի ձևավորման և գործունեության ընթացակարգով և «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի փորձագիտական խմբի ձևավորման կարգով, 2021 թվականի հուլիսի 24-ին Հավատարմագրման Հանձնաժողովի նիստում քննարկեց «Եվրոպական համալսարան» հիմնադրամի (այսուհետ՝ ԵՀ, Համալսարան) ինստիտուցիոնալ կարողությունների հավատարմագրման հարցը:

Հավատարմագրման գործընթացի հիմնական փուլերն իրականացվել են հետևյալ ժամկետներում.

դիմում-հայտի ներկայացում՝ 2 սեպտեմբերի 2019թ.
վերանայված ինքնավերլուծության ներկայացում՝ 31 հունվարի 2020թ.
առցանց փորձագիտական այցի իրականացում՝ 2-7 նոյեմբերի 2020թ.
փորձագիտական զեկույցի ներկայացում՝ 24 փետրվարի 2021թ.
թերությունների վերացման ծրագրի ներկայացում՝ 2 ապրիլի 2021թ.

.

«Եվրոպական համալսարան» հիմնագրամի ինստիտուցիոնալ կարողությունների փորձաքննությունն իրականացրել է «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի փորձագիտական խմբի ձևավորման կարգ»-ի պահանջներին համապատասխան ձևավորված անկախ փորձագետների խումբը: Գնահատումը կատարվել է ՀՀ կառավարության 2011 թվականի հունիսի 30-ի N 959–Ն որոշմամբ հաստատված ինստիտուցիոնալ հավատարմագրման 10 չափանիշներով:

Ինստիտուցիոնալ հավատարմագրման 10 չափանիշներից **«Կառավարում և վարչարարություն», «Հետազոտություն և զարգացում», «Հասարակական պատասխանատվություն»** չափանիշները գնահատվել են անբավարար:

Հանձնաժողովը, ուսումնասիրելով ԵՀ-ի կողմից ներկայացված ինքնավերլուծությունը, փորձագիտական զեկույցը, զեկույցի նախնական տարբերակի վերաբերյալ բուհի դիտողություններն ու առաջարկությունները, զեկույցում նշված թերությունների վերացման գործողությունների ծրագիրը, բուհի կողմից տրամադրված տեղեկանքն իրականացվող աշխատանքների վերաբերյալ, լսելով փորձագիտական գնահատման վերաբերյալ Հանձնաժողովի նախագահի կողմից ընտրված երեք անդամների եզրակացությունները, որոնք ձևավորվել են փորձագիտական խմբի անդամների և համալսարանի ներկայացուցիչների հետ հանդիպումների արդյունքում, ինչպես նաև հանձնաժողովի անդամների դիտարկումներն ու առաջարկությունները, ամրագրեց հետևյալը.

2018 թվականին ԵՀ-ն շնորհվել է պայմանական ինստիտուցիոնալ հավատարմագրում 2 տարի ժամկետով, հաշվի առնելով գործընթացի շրջանակում ստացված խորհրդատվությունները, կազմել է բարելավման գործողությունների ծրագիր: Համալսարանը մի շարք ոլորտներում իրականացրել է բարելավմանը միտված փոփոխություններ:

1. Համալսարանը հիմնականում ապահովում է որակավորումների արժանահավատ շնորհում

Մասնագիտության կրթական ծրագրերը (ՄԿԾ) հիմնականում բխում են ԵՀ-ի առաքելությունից: Նախորդ հավատարմագրումից հետո Համալսարանը շոշափելի աշխատանքներ է տարել մասնագիտությունների կրթական ծրագրերի զարգացման ուղղությամբ: Ծրագրերը վերակազմվել ու վերաձևակերպվել են որակի ապահովման տեղական ու միջազգային չափանիշների ու պահանջների համաձայն, բարելավվել է դրանց որակի ապահովման մեխանիզմն:

Բոլոր կրթական ծրագրերը կազմված են վերջնարդյունքահեն սկզբունքով, հստակեցվել և բարելավվել են դասավանդման, ուսումնառության մեթոդները, պրակտիկ բաղադրիչը, կրթական ծրագրերի որակի ապահովման գործիքակազմը: Առկա է գնահատման քաղաքականություն, իրականացվում է ՄԿԾ-ների բենչմարքինգ, պարբերաբար կատարվում են մշտադիտարկումներ, բարելավման աշխատանքներ: Համալսարանը հնարավորություն է տվել մասնաճյուղերին վերասահմանել վերջարդյունները, հաշվի առնելով տարածաշրջանի պահանջներն ու առաջնահերթությունները:

Բուհում առկա է փորձառու ՊԴ կազմ, որոնց մեծ մասը հանդիսանում են գիտության թեկնածուներ: Պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմի ընտրությունն իրականացվում է հաստատված քաղաքականությամբ և ընթացակարգերով, սահմանված են

պրոֆեսորադասախոսական կազմի մասնագիտական որակներին ներկայացվող ընդհանրական պահանջներ, գլխամասում ապահովված է ըստ մասնագիտությունների կրթական ծրագրերի՝ համապատասխան պրոֆեսորադասախոսական կազմի կայունությունը, առկա է որոշակի քաղաքականություն և ընթացակարգեր դասախոսական կազմի պարբերաբար գնահատման համար: Այդուհանդերձ չեն գործում պրոֆեսորադասախոսական կազմի մասնագիտական առաջընթացի ապահովման հստակ քաղաքականությունը, չկա դասախոսների վերապատրաստման հստակ ծրագիր:
Ռեսուրսային բազան թույլ է տալիս ապահովել որակավորումների արժանահավատ շնորհում:

2. *Կառավարման և որակի ապահովման համակարգերը հիմնականում աջակցում են որակավորումների շնորհման արժանահավատության բարելավմանը*

Նախորդ հավատարմագրումից հետո նկատելի են որոշ դրական փոփոխություններ ԵՀ-ի կառավարման և վարչարարության ոլորտում: Հիմնականում ավարտուն տեսքի է բերվել ինստիտուցիոնալ-նորմատիվային հենքը: Կատարվել են կառուցվածքային-կազմակերպական բնույթի վերափոխումներ՝ կրթական ստորաբաժանումներն օպտիմալացվել են:

Այդուհանդերձ կառավարումն ու վարչարարությունը դեռևս չեն իրականացվում կառավարման մեխանիզմներով ու սկզբունքներով, որոշումների կայացումը չի հիմնվում տվյալների հավաքագրման և վերլուծության վրա, չեն վերհանվում և վերլուծվում բուհի գործունեության վրա ազդող գործոնները, կայացած չէ հաշվետվողականության համակարգը: Հոգաբարձուների խորհուրդը հստակ չի սահմանում Համալսարանի զարգացման ուղղությունները, չի աջակցում բուհին ձեռք բերելու համապատասխան ֆինանսական, նյութատեխնիկական ռեսուրսներ;

Կառավարման համակարգը կարևորում է և միտված է որակի բարելավմանը: Կատարվել են որակի ապահովման համակարգի զարգացմանը նպաստող մի շարք բարեփոխումներ: Առկա է համապատասխան ստորաբաժանում, ԵՀ-ն տրամադրել է նյութական և ֆինանսական ռեսուրսներ: Մշակվել են ոլորտը կանոնակարգող փաստաթղթերը, մշակվել են որակի ապահովման քաղաքականություն և ձեռնարկ, ներքին շահակիցները որոշ չափով ներգրավված են որակի ապահովման գործընթացներին, ԵՀ-ն որդեգրել է որակի կառավարման ՊԻԳԲ շրջափուլի իրականացումը: Սակայն դեռևս հստակ չէ կառավարման համակարգի և որակի ապահովման բաժնի փոխգործակցությունը:

3. *Միջազգայնացումն ու հետազոտական/ստեղծագործական գործունեությունը զարգացման միտումներ ունեն:*

Նախորդ հավատարմագրումից հետո ՄՈՒՀ-ը ծավալում է հետևողական գործունեություն միջազգայնացման և արտաքին կապերի զարգացման ուղղությամբ: Բուհը արտաքին կապերի և միջազգայնացման ապահովման ենթակառուցվածքի գործունեության միջոցով կարևորում է կրթության միջազգայնացումը, մշակել է որոշակի մեխանիզմներ կրթության միջազգայնացման զարգացման նպատակով, ունի տեղական և միջազգային գործնկերների հետ փոխգործակցություն, ապահովում է ներքին շահակիցների օտար լեզվի իմացությունը:

Սակայն հետազոտական գործընթացի միջազգայնացման ուղղությամբ իրականացվող աշխատանքները դեռ բավարար չեն:

Համալսարանը չունի հետազոտական և զարգացման հստակ քաղաքականություն, վերհանված չեն բուհի հետազոտական ուղղությունները և տեղի չի ունենում երկարաժամկետ, միջնաժամկետ ու կարճաժամկետ պլանավորում: Թույլ է կապը ուսումնական և հետազոտական գործընթացի միջև:

ԵՀ-ի կառավարման համակարգը սկսել է կարևորել այս ուղղությամբ առկա խնդիրները և բարելավման պլանի շրջանակում նախատեսված աշխատանքները թույլ կտան բուհին գրանցել առաջընթաց, առավել ևս որ փորձառու ՊԴ կազմը կնպաստի դրան:

4. Առկա են թերացումներ, որոնք առանցքային ազդեցություն չունեն որակավորման արժանահավատ շնորհման տեսանկյունից, ստեղծված են հիմքեր բարելավումների համար:

5. Փորձագիտական զեկույցում նշված թերությունների վերացման ԵՀ-ի ներկայացրած ծրագիրը հիմնականում իրատեսական է: ԵՀ-ի կողմից փորձագիտական խմբի խորհրդատվությունները հիմնականում ճիշտ են ընկալվել, և դրանց իրականացումը կնպաստի բուհի առաջընթացին:

Ելնելով վերը նշվածից, Հավատարմագրման Հանձնաժողովը բաց քվեարկության արդյունքում

ՈՐՈՇԵՑ

1. **«Եվրոպական համալսարան» հիմնադրամին շնորհել ինստիտուցիոնալ հավատարմագրում 4 /չորս/ տարի ժամկետով:**
2. Հավատարմագրում շնորհելու որոշման հրապարակումից հետո՝ երկամսյա ժամկետում ՈԱԱԿ-ին ներկայացնել փորձագիտական զեկույցում նշված թերությունների վերացման վերանայված ծրագիր և համապատասխան ժամանակացույց՝ հաշվի առնելով **«Կառավարում և վարչարարություն», «Հետազոտություն և զարգացում», «Հասարակական պատասխանատվություն»** ոլորտներում առկա խնդիրներին առաջնահերթ լուծում տալու անհրաժեշտությունը:
3. Հատուկ ուշադրություն դարձնել.
   - բուհի կողմից իրականացվող գործընթացների արդյունավետության գնահատման առաջընթացի ցուցիչների չափելիության հստակեցմանը,
   - արդյունքահեն կառավարման համակարգի բարելավմանը,
   - արտաքին ու ներքին շահակիցների գործուն մասնակցությանը ՌԾ նպատակների սահմանման և իրագործման, որակի ապահովման գործընթացներում,
   - տվյալների հավաքագրման և դրանց վերլուծության մեխանիզմների կատարելագործմանը՝ շեշտադրելով որակական վերլուծությունների բաղադրիչը,
   - տվյալների վելուծությունների վրա հիմնված որոշումների կայացմանը,
   - հետազոտական գերակայությունների վերհանմանը, ռազմավարության ձևավորմանը,
   - ուսումնառության և հետազոտության կապի ամրապնդմանը,
   - մասնաճյուղերում որակի ապահովման համակարգի ներդրմանը,
   - բուհում առկա լավագույն փորձի բացահայտման և տարածման մեխանիզմների ներդրմանը:

4. Կազմակերպել ԵՀ-ում իրականացվող մասնագիտության կրթական ծրագրերի ներքին աուդիտ արտաքին փորձագետների ներգրավմամբ:
5. «ՀՀ մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների և դրանց մասնագիտությունների պետական հավատարմագրման» կարգի 12-րդ կետի պահանջներին համապատասխան 2 տարի մեկ անգամ ՈԱԱԿ-ին գրավոր զեկույց ներկայացնել իրականացված գործողությունների արդյունքների վերաբերյալ՝ գնահատելով ակադեմիայի գործունեության բարելավումը, նորարարություններն ու ձեռքբերումները:
6. Հանձնարարել ՈԱԱԿ-ին պարտադիր մշտադիտարկման ենթարկել Եվրոպական համալսարանի գործունեության արդյունավետությունն՝ ըստ առաջընթացի առանցքային ցուցիչների:

Հավատարմագրման Հանձնաժողովի նախագահ **Ա. Սաղյան**

2021 թ. հուլիսի 24
ք.Երևան